

ՄԱՏԵՐԻԱ

MATERIA

Ժամանակակից
պարի ութ ոճեր մեկ
ստեղծագործության մեջ



ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Context.
Diana Vishneva
(Ռուսաստան)

ՀԱՄԱԴՐՈՂ ԵՎ ԲԵՏԱԴՐԻՉ
Պավել Գլուխով

ԽՈՐԵՈԳՐԱՖՆԵՐ
Կոնստանտին Կեյխել
Օլգա Վասիլևա
Օլգա Տիմոշենկո
Կոնստանտին Սեմյոնով
Անդրեյ Մերկուրև
Օլգա Լաբովկինա
Վլադիմիր Վառնավա
Էռնեստ Նուրգալի

ԿԱՏԱՐՈՂՆԵՐ
9 պարող

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ
60 րոպե

Ութ խորեոգրաֆ ստեղծեցին մեկ ստեղծագործություն՝ յուրահատուկ բեմանկարչությամբ: «Մատերիան» ցույց կտա ժամանակակից պարային ոճերի, աշխատանքի մոտեցումների և խորեոգրաֆիկ մեթոդների բազմազանություն:


Կա արդյո՞ք հոգի այս ամենակուլ զգացումներ առաջացնող պարի մեջ, որը միավորում է մարդկանց, տեղն ու ժամանակը: Ներկայացման խորեոգրաֆներն մտորում են գործողության և անգործության, ժամանակի ընթացքի և տարածության վերափոխման, ձևի և նյութի, մեխանիզմի, կրքի, կյանքի, սիրո և մահվան մասին:

Context. Diana Vishneva ժամանակակից խորեոգրաֆիայի միջազգային փառատոնը ստեղծվել է որպես ստեղծագործական լաբորատորիա երիտասարդ խորեոգրաֆների համար: Ստեղծողը և գաղափարական ոգեշնչողը Մարիինյան թատրոնի (Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստան) և Ամերիկյան բալետի թատրոնի պրիմա պարուհի Դիանա Վիշնյովան է:

ԵԶԱԿՒՈՒԹՅՈՒՆ/ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ

SINGULARITY/ MINIATURES

Պարը՝ անկրկնելին պատկերելու փորձ



ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Context.
Diana Vishneva
(Ռուսաստան)

ԽՈՐԵՈԳՐԱՖ
Կիրիլ Ռադև

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ
Անդրեյ Չապորովի

ԿԱՏԱՐՈՂՆԵՐ
6 պարող

ՏԵԿՆՈԼՈԳԻԱԿԱՆ
60 րոպե

«Եզակիություն»-ը պար է անկրկնելի գոյության, իրադարձության, երևույթի մասին: Իմաստ առաջացնող իրադարձության՝ շրջադարձային կետի: Հատման կետի, արցունքների և ծիծաղի կետի, հիվանդություն և առողջություն, հույսի և հուսահատության զգացողության կետի: Զգայուն կետի:

«Պարը էներգիա է, որն անսահման է, անկրկնելի: Յուրաքանչյուր ներկայացում իրականում չունի ճշգրիտ օրենքներ, գերիշխող և գիտական բացատրություններ, և «Եզակիություն» բալետը նույնպես չի դառնա բեմում պատմված պատմություն, այլ կլինի հանդիսատեսի ներսում ծնված մի ամբողջ աշխարհ», -
ասում է բեմադրության հեղինակ **Կիրիլ Ռադևը:**

Context. Diana Vishneva ժամանակակից խորեոգրաֆիայի միջազգային փառատունը ստեղծվել է որպես ստեղծագործական լաբորատորիա երիտասարդ խորեոգրաֆների համար: Դրա ստեղծողը և գաղափարական ոգեշնչողը Մարիինյան թատրոնի (Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստան) և Ամերիկյան բալետի թատրոնի պրիմա պարուհի Դիանա Վիշնևան է:

Կիրիլ Ռադևը բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր է, 2007 թվականից իսպանական «Corella Ballet» թատերախմբի մենակատարն է և խորեոգրաֆը Անխել Կորեայի ղեկավարությամբ: Խորեոգրաֆի բեմադրություններն իրականացվել են Եվրոպայի և Ամերիկայի առաջատար բալետի բեմերում:

ՁԵՂՆԱՀԱՐԿ

THE LOFT

Ինքնատիրապետման
դեմ պայքարող կրքոտ
կանանց մասին պարային
ներկայացում



ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**JO STRØMGREN
KOMPANI**
(Նորվեգիա)

ԲԵՄԱԴՐԻՉ / ԽՈՐԵՈԳՐԱՖ
Յո Ստրոմգրեն

ԿԱՏԱՐՈՂՆԵՐ
**Յենիետա Յամլի
Նորա Լ. Սվենդսդադդ
Աննա Բ. Անդրեսեն
Մալիկա Բերնի**

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ
60 րոպե

Փակ տարածության մեջ մարդկանց միջև շփումը հավերժական խնդիր է: Այս խնդրով տառապում է մեր տեսակն այն օրվանից, երբ սկսեցինք ապրել քարանձավներում: «Ձեղնահարկը» հիշեցնում է մեզ, որ ժամանակակից կյանքում մենք դեռ գործ ունենք այս խնդրի հետ:


Չորս կին իրենց կոնֆլիկտները լուծում են փակ տարածքում: Անպատասխան սիրո զգացողություններն ու սյուրռեալիստական երազանքները թույլ են տալիս դրսևորել ճնշված կանացի բնագրերը:

Նորվեգիայի հանրահայտ JO STRØMGREN KOMPANI-ի (JSK) բեմադրությունը լավագույն ֆիզիկական թատրոններից է: Պարն ու թատրոնը համակցված են ուժեղ ֆիզիկական հումորի և ավելի գորշ երանգների հետ: Իսկ կադրից դուրս ծայնը ու անիմաստ լեզվի օգտագործումը դարձել են նրանց բնորոշ ոճը:

ԴԵՂՃԱՆԻԿ

CANARY

Համաշխարհային
օպերային դիվա Մարիա
Կալասի դերում Սաթի
Սպիվակովան է



ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԹԱՏՐՈՆ

(Ռուսաստան)

ԲԵՄԱԴՐԻՉ

Դմիտրի Սերոդյուկ

ԿԱՏԱՐՈՂՆԵՐ

Սաթի Սպիվակովա

Վլադիմիր Շուլգա

Եվգենի Դանչևսկի

Տատյանա Կրեչետովա

Ելենա Շանինա

Իլոնա Գայշուն

Եվգենի Սամարին

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

105 րոպե

Երկրպագուների և քննադատների շրջանում Մարիա Կալասը արժանացել է La Divina տիտղոսին աստվածային: Բայց Սաթի Սպիվակովայի կատարմամբ ներկայացման հերոսուհին վախենում է իր արտացոլումից. բեմանկարչությունը թույլ է տալիս տեսնել երգչուհու ներաշխարհը հայելիների միջով: Դեղձանիկ Մարիան ի վիճակի չէ իրեն ընդունել այնպիսին, ինչպիսին կա: Համաշխարհային մեծ համբավ վայելող սոպրանոյից մնացել են միայն բեկորներ: Նրան լուռ ծափահարում են հորինված դահլիճները: Նա պարտվեց՝ տարակուսելով ամբողջ աշխարհին այն հարցով, թե կարո՞ղ է արդյոք մեծ նկարիչն իրեն մարդկային երջանկություն թույլ տալ: Ի՞նչ գին կունենա այդ ամենը:

«Սրանք մտորումներ են այն թեմայի շուրջ, թե ինչպես է արտիստը կորցնում իր շնորհը», - ասում է **ռեժիսոր Դմիտրի Սերոդյուկը**, - Լինելով ծայրաստիճան շնորհալի՝ Մարիա Կալասը սիրո պատճառով հրաժարվեց իր կարիերայից: Եվ սա նրա դժբախտությունն է, նրա հարաբերությունները Ամենակարողի հետ: Նա ասաց Օսասիսին. «Եթե չես ուզում, ես չեմ երգի»: Եվ այդ պահին նա կորցրեց ձայնը, հայտնվեց մասնագիտական անհաջողությունների շղթայում: Եվ իրենից հեռացավ մի մարդ, ում համար նա դավաճանեց իր մեջ Աստծուն»:

ԹՇՆԱՄԻ (ԽԱՂԱՂ ՀԱՄԱԺՈՂՈՎ)

ENEMY
(A PEACE CONFERENCE)

**Խորեոգրաֆիկ պիես՝
Եվրոպայում ռազմական
հակամարտության
տրավմայի մասին**



ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ZONE - POÈME -
(Լիլ, Ֆրանսիա)

ԲԵՄԱԴՐԻՉՆԵՐ
**Մելոդի Լասելին
Սիմոն Կապել**

ԽՈՐԵՈԳՐԱՖԻԱ
**Մելոդի Լասելին՝
Լիա Պերայի հետ
համագործակցությամբ**

ԿԱՏԱՐՈՂՆԵՐ
**Մելոդի Լասելին
Լիա Պերա**

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ
60 րոպե

Աշխատանք՝ ստեղծված հանուն խաղաղության և թշնամուն կասկածի տակ դնելու նպատակով: Երկու պարողների համար նախատեսված խորեոգրաֆիկ պերֆորմանսն առաջարկում է պարադոքսալ ուղի, որով մարմինները շնչառության միջոցով գտնում են ձայնը՝ տրավմաները հաղթահարելու հնարքը:

«Մենք երկու ընկերների՝ ուկրաինուհի Էլվիրային և ռուս Սվետլանային խնդրեցինք հանդիպել և ձայնագրել իրենց խոսակցությունները: Այս վավերագրական աշխատանքը առաջարկում է ժամանակակից հայացք երկու պատերազմող երկրներին: Նրանց անձնական պատմությունները վկայում են շարունակվող հակամարտության անհեթեթության և սերտ կապերի մասին, որոնք միավորում են եվրոպական մայրցամաքի ժողովուրդներին: Նրանց ձայնը խառնվելու է ՆԱՏՕ-ի գինվորների և նրանց ընտանիքների վկայություններին, որոնք տարբեր կերպ ներգրավված են այն ամենի մեջ, ինչ տեղի է ունենում ամեն օր սահմաններին և եվրամիության սահմաններից դուրս»: